ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՅՐԸ

Խաչիկ, Գուրգեն, Աբրահամ
Մալխասյանների մորն եմ նվիրում

Մայրը տան մեջ երեք սյուներ՝
Երեք ջահել որդի ուներ
Պատերազմից առաջ.
Երեք արծիվ, երեք որդի
Թշնամու դեմ ելան մարտի՝
Մոր օրհնությունն առած:

Գրոհներում օրհասական
Քաջերի պես նրանք ընկան
Հանուն մեր աշխարհի.
Եվ հեռավոր բլուրներին
Շիրիմներն են հանգչում լռին
Երեք ասպետների:

Մինչդեռ Նորքի այգու խոտում
Խնջույքի գառն էր թռչկոտում
Նրանց դարձի համար,
Իսկ ստվերում եղրևանու
Խաղում էին երեք մանուկ,
Շինում կամուրջ ու սար:

Հաղթանակի այգը բացվեց.
Ամեն տուն ու տնակ լցվեց
Ջերմ շողերով նրա.
Եվ մի գիշեր մինչ առավոտ
Մոր արցունքն էր կաթում ծանոթ
Նամակների վրա...

1948